ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-362-13.11.2019,17.01.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248 քրեական դատավարության օրենսգրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել նոր 93[1]-րդ հոդվածով.

«Հոդված 93[1] Օրինական ներկայացուցչին գործով վարույթից հեռացնելը

1. Անչափահաս կամ անգործունակ մասնակցի խնամակալը կամ հոգաբարձուն չի կարող մասնակցել վարույթին, եթե՝
1) գտնվում է ազգակցական կապի կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ այն դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի հետ, ով մասնակցել կամ օրինական ներկայացուցչի ներգրավման պահին մասնակցում է վարույթին.
2) գտնվում է ազգակցական կապի կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ կասկածյալի կամ մեղադրյալի կամ նրանց մերձավոր ազգականների հետ.
3) օրենքով կամ դատական ակտով չի կարող լինել օրինական ներկայացուցիչ.
4) իր վարքագծով ակնհայտորեն վնասում է ներկայացվողի շահերին, իր վարքագծով խոչընդոտել է ներկայացվողի իրավունքների իրականացմանը կամ հանգեցրել է դրանց խախտմանը.
5) նրա վերաբերյալ առկա են ներկայացվողի շահերի դեմ ուղղված ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր:
2. Անչափահաս կամ անգործունակ մասնակցի ծնողը, որդեգրողը չի կարող մասնակցել վարույթին սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 205[1]-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «երկու» բառը փոխարինել «մեկուկես» բառով.
2) 2-րդ մասում «վեց» բառը փոխարինել «չորս» բառով.

Հոդված 3. Օրենսգրքի 207-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «մանկավարժի» բառից հետո լրացնել «կամ որակավորված հոգեբանի» բառերը.
2) 3-րդ մասում «ներկայացուցչին» բառից հետո լրացնել «և մանկավարժին կամ որակավորված հոգեբանին» բառերը.
3) լրացնել նոր բովանդակությամբ 5-9-րդ մասերով.

«5. Ելնելով երեխայի լավագույն շահերից, անչափահաս վկային կամ անչափահաս տուժողին կարող է հարցեր տալ հոգեբանը:

6. Անչափահաս վկային կամ անչափահաս տուժողին հարցերը հոգեբանի կողմից, որպես կանոն, տրվում են հետևյալ դեպքերում՝

1) սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով.
2) ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ գործերով.
3) երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ գործերով.
4) անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի մտավոր զարգացման մեջ հետ մնալու կամ հոգեկան խնդիր ունենալու դեպքում.
5) մինչև 14 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննության դեպքում:

7. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը կարող է տեսաձայնագրառվել: Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության տեսաձայնագրառումը պարտադիր է:

8. Հարցաքննության տեսաձայնագրառման վերաբերյալ քննիչը լսում է հարցաքննության մասնակիցների կարծիքները՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը: Տեսաձայնագրառման վերաբերյալ հարցաքննության մասնակիցների կարծիքներն արտացոլվում են արձանագրության մեջ: Մասնակիցները հարցաքննության տեսաձայնագրառմանվերաբերյալ կարծիք չեն հայտնում սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում:

9. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության վայրի ընտրությունն իրականացվում է ելնելով երեխայի լավագույն շահերից:»:

Հոդված 4. Օրենսգրքի 209-րդ հոդվածը լրացնել նոր 8-րդ մասով.

«8. Սույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված դեպքերում հարցաքննության արձանագրությունում պարտադիր արտացոլվում է, որ հարցերը տրվել են հոգեբանի կողմից:»:

Հոդված 5. Օրենսգրքի 216-րդ հոդվածը լրացնել նոր 5.1-րդ մասով.

«5.1. Անչափահաս տուժողի կամ վկայի մասնակցությամբ առերեսումները՝ սույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում, ինչպես նաև, եթե դա է պահանջում երեխայի լավագույն շահը, իրականացվում են միջնորդավորված՝ տեսաձայնագրառման և տեխնիկական այլ միջոցների օգնությամբ:»:

Հոդված 6. Օրենսգրքի 341-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«**Հոդված 341.** Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը

1. Անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը դատարանում կարող է հարցաքննվել, եթե նրա հարցաքննությունը չի տեսաձայնագրառվել նախնական քննության ընթացքում: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության տեսաձայնագրառումը վերարտադրվում է դատական նիստերի դահլիճում: Եթե տեսաձայնագրառման վերարտադրումից հետո առաջանում է անչափահասին հարցեր տալու անհրաժեշտություն, ապա անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը ցուցմունք տալու նպատակով հրավիրվում է դատարան:
2. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման համար, ինչպես նաև սույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ, կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ: Դատական նիստերի դահլիճ վերադառնալուց հետո ամբաստանյալի համար հրապարակվում են անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի ցուցմունքները, և նրան հնարավորություն է ընձեռնվում տվյալ վկային կամ տուժողին տալ հարցեր կամ տվյալ վկայի կամ տուժողի հաղորդած տվյալների վերաբերյալ տալ ցուցմունք:
3. Դատարանում մինչև 16 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կատարվում է որակավորված հոգեբանի, իսկ նրա ներգրավման անհնարինության դեպքում մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը:
4. Տասնվեց տարին չլրացած վկան կամ տուժողը հեռացվում է դատական նիստի դահլիճից նրա հարցաքննությունն ավարտվելուց հետո, բացի այն դեպքերից, երբ դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, անհրաժեշտ է համարում այդ վկայի կամ տուժողի հետագա ներկայությունը:
5. Դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, իրավունք ունի անչափահաս տուժողին թույլ տալ ժամանակավորապես դուրս գալ դատական նիստերի դահլիճից, եթե ապացույցների հետազոտմանը ներկա գտնվելը նրա վրա կունենա բացասական ազդեցություն: Դատական նիստերի դահլիճ վերադառնալուց հետո անչափահաս տուժողի համար հակիրճ հրապարակվում են ապացույցների հետազոտման արդյունքները:»:

Հոդված 7. Օրենսգրքի 166-րդ հոդվածի վերնագրում. «փորձագետի» բառից հետո լրացնել «հոգեբանի» բառը:
1) 1-ին մասում «փորձագետը» բառից հետո լրացնել «հոգեբանը» բառը.
2) 2-րդ մասում «փորձագետի» բառից հետո լրացնել «հոգեբանի» բառը:

Հոդված 8. Օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «մասնագետի» բառից հետո լրացնել «հոգեբանի» բառը:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի մեկից:

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
(Պ-362-13.11.2019-ՊԻ-011/0)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248 քրեական դատավարության օրենսգրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել նոր 93[1]-րդ հոդվածով.

~~«Հոդված 93[1] Օրինական ներկայացուցչին գործով վարույթից հեռացնելը~~

~~1. Խնամակալության և հոգաբարձության մարմնից նշանակված անչափահաս կամ անգործունակ մասնակցի օրինական ներկայացուցիչը չի կարող մասնակցել վարույթին, եթե՝~~

~~1) գտնվում է ազգակցական կապի կամ անձնական կախվածության մեջ այն դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի հետ, ով մասնակցել կամ օրինական ներկայացուցչի ներգրավման պահին մասնակցում է վարույթին.~~
~~2) գտնվում է ազգակցական կապի կամ անձնական կախվածության մեջ կասկածյալի կամ մեղադրյալի կամ նրանց մերձավոր ազգականների հետ.~~
~~3) օրենքով կամ դատական ակտով չի կարող լինել օրինական ներկայացուցիչ:~~
~~2. Անչափահաս կամ անգործունակ մասնակցի օրինական ներկայացուցիչ չեն կարող մասնակցել նրանց ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, եթե նրանք նույն քրեական գործով հանդիսանում են քրեական դատավարությանը մասնակցող անձ:»:~~

Հոդված 93[1] Օրինական ներկայացուցչին գործով վարույթից հեռացնելը

1. Անչափահաս կամ անգործունակ մասնակցի խնամակալը կամ հոգաբարձուն չի կարող մասնակցել վարույթին, եթե՝
1) գտնվում է ազգակցական կապի կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ այն դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի հետ, ով մասնակցել կամ օրինական ներկայացուցչի ներգրավման պահին մասնակցում է վարույթին.
2) գտնվում է ազգակցական կապի կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ կասկածյալի կամ մեղադրյալի կամ նրանց մերձավոր ազգականների հետ.
3) օրենքով կամ դատական ակտով չի կարող լինել օրինական ներկայացուցիչ.
4) իր վարքագծով ակնհայտորեն վնասում է ներկայացվողի շահերին, իր վարքագծով խոչընդոտել է ներկայացվողի իրավունքների իրականացմանը կամ հանգեցրել է դրանց խախտմանը.
5) նրա վերաբերյալ առկա են ներկայացվողի շահերի դեմ ուղղված ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր:

2. Անչափահաս կամ անգործունակ մասնակցի ծնողը, որդեգրողը չի կարող մասնակցել վարույթին սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում:

Հոդված 2. Օրենսգրքի 205[1]-րդ հոդվածի՝

3) 1-ին մասում «երկու» բառը փոխարինել «մեկուկես» բառով.
4) 2-րդ մասում «վեց» բառը փոխարինել «չորս» բառով.
~~3-րդ մասում «բժշկի» բառից հետո լրացնել «կամ հոգեբանի» բառերը:~~

Հոդված 3. Օրենսգրքի 207-րդ հոդվածի՝

4) 2-րդ մասում «մանկավարժի» բառից հետո լրացնել «կամ հոգեբանի» բառերը.
5) 3-րդ մասում «ներկայացուցչին» բառից հետո լրացնել «և մանկավարժին կամ հոգեբանին» բառերը.
6) լրացնել նոր բովանդակությամբ 5-9-րդ մասերով.
«5. Քննիչի հանձնարարությամբ, ելնելով երեխայի լավագույն շահերից, անչափահաս վկային կամ անչափահաս տուժողին կարող է հարցեր տալ հոգեբանը:
6. Անչափահաս վկային կամ անչափահաս տուժողին հարցերը հոգեբանի կողմից, որպես կանոն, տրվում են հետևյալ դեպքերում՝
6) սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով.
7) ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ գործերով.
8) երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ գործերով.
9) անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի մտավոր զարգացման մեջ հետ մնալու կամ հոգեկան խանգարում ունենալու դեպքում.
10) մինչև 14 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննության դեպքում:
10. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը կարող է տեսաձայնագրառվել: Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության տեսաձայնագրառումը պարտադիր է:
11. Հարցաքննության տեսաձայնագրառման վերաբերյալ քննիչը լսում է հարցաքննության մասնակիցների կարծիքները՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը: Տեսաձայնագրառման վերաբերյալ հարցաքննության մասնակիցների կարծիքներն արտացոլվում են արձանագրության մեջ: Մասնակիցները հարցաքննության առձայնագրման վերաբերյալ կարծիք չեն հայտնում սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում:
12. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության վայրի ընտրությունն իրականացվում է ելնելով երեխայի լավագույն շահերից, ~~հարմարավետությունից ու նրա տարիքին և զարգացվածությանը համապատասխանող պայմանների առկայությունից~~:»:

Հոդված 4. Օրենսգրքի 209-րդ հոդվածը լրացնել նոր ~~8~~ 5.1-րդ մասով.
«8. Սույն օրենքի 207-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված դեպքերում հարցաքննության արձանագրությունում պարտադիր արտացոլվում է, որ հարցերը տրվել են հոգեբանի կողմից:»:

Հոդված 5. Օրենսգրքի 216-րդ հոդվածը լրացնել նոր 8-րդ մասով.
«8. Անչափահաս տուժողի կամ վկայի մասնակցությամբ առերեսումները՝ սույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում, ինչպես նաև, եթե դա է պահանջում երեխայի լավագույն շահը, իրականացվում են միջնորդավորված՝ տեսաձայնագրառման և տեխնիկական այլ միջոցների օգնությամբ:»:

Հոդված 6. Օրենսգրքի 341-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

~~«**Հոդված 341.** Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը~~

~~Անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը դատարանում հարցաքննվում է, եթե նրա հարցաքննությունը չի տեսաձայնագրառվել նախնական քննության ընթացքում: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության տեսաձայնագրառումը վերարտադրվում է դատական նիստերի դահլիճում: Տեսաձայնագրառման վերարտադրումից հետո առաջացած հարցերն այլ եղանակով չփարատելու դեպքում, անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը ցուցմունք տալու նպատակով հրավիրվում են դատարան:~~

~~1. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը՝ նրա ցանկությամբ, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ, կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ: Դատական նիստերի դահլիճ վերադառնալուց հետո ամբաստանյալի համար հրապարակվում են անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի ցուցմունքները, և նրան հնարավորություն է ընձեռնվում տվյալ վկային կամ տուժողին տալ հարցեր կամ տալ ցուցմունքներ՝ վկայի կամ տուժողի հաղորդած տվյալների վերաբերյալ:~~
~~2. Սույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը կատարվում է ամբաստանյալի բացակայությամբ՝ պահպանելով սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգը:~~
~~3. Դատարանում մինչև 16 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի կամ հոգեբանի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը:~~
~~4. 16 տարին չլրացած տուժողը, նրա օրինական ներկայացուցիչը, մանկավարժը, հոգեբանը կարող են դուրս գալ դատական նիստերի դահլիճից անչափահաս տուժողի հարցաքննությունն ավարտվելուց հետո, բացի այն դեպքերից, երբ դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, անհրաժեշտ է համարում այդ տուժողի հետագա ներկայությունը:~~
~~5.1. Դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, իրավունք ունի անչափահաս տուժողին թույլ տալ ժամանակավորապես դուրս գալ դատական նիստերի դահլիճից, եթե ապացույցների հետազոտմանը ներկա գտնվելը նրա վրա կունենա բացասական ազդեցություն: Դատական նիստերի դահլիճ վերադառնալուց հետո անչափահաս տուժողի համար հակիրճ հրապարակվում են ապացույցների հետազոտման արդյունքները:»:~~

Հոդված 341. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը

2. Անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը դատարանում կարող է հարցաքննվել, եթե նրա հարցաքննությունը չի տեսաձայնագրառվել նախնական քննության ընթացքում: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության տեսաձայնագրառումը վերարտադրվում է դատական նիստերի դահլիճում: Եթե տեսաձայնագրառման վերարտադրումից հետո առաջանում է անչափահասին հարցեր տալու անհրաժեշտություն, ապա անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը ցուցմունք տալու նպատակով հրավիրվում է դատարան:

3. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման համար, ինչպես նաև սույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ, կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ: Դատական նիստերի դահլիճ վերադառնալուց հետո ամբաստանյալի համար հրապարակվում են անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի ցուցմունքները, և նրան հնարավորություն է ընձեռնվում տվյալ վկային կամ տուժողին տալ հարցեր կամ տվյալ վկայի կամ տուժողի հաղորդած տվյալների վերաբերյալ տալ ցուցմունք:

3. Դատարանում մինչև 16 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կատարվում է որակավորված հոգեբանի, իսկ նրա ներգրավման անհնարինության դեպքում մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը:

4. Տասնվեց տարին չլրացած վկան կամ տուժողը հեռացվում է դատական նիստի դահլիճից նրա հարցաքննությունն ավարտվելուց հետո, բացի այն դեպքերից, երբ դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, անհրաժեշտ է համարում այդ վկայի կամ տուժողի հետագա ներկայությունը:

5. Դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, իրավունք ունի անչափահաս տուժողին թույլ տալ ժամանակավորապես դուրս գալ դատական նիստերի դահլիճից, եթե ապացույցների հետազոտմանը ներկա գտնվելը նրա վրա կունենա բացասական ազդեցություն: Դատական նիստերի դահլիճ վերադառնալուց հետո անչափահաս տուժողի համար հակիրճ հրապարակվում են ապացույցների հետազոտման արդյունքները:»:

Հոդված 7. Օրենսգրքի 166-րդ հոդվածի վերնագրում. «փորձագետի» բառից հետո լրացնել «հոգեբանի» բառը:

3) 1-ին մասում «փորձագետը» բառից հետո լրացնել «հոգեբանը» բառը.

4) 2-րդ մասում «փորձագետի» բառից հետո լրացնել «հոգեբանի» բառը:

Հոդված 8. Օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «մասնագետի» բառից հետո լրացնել «հոգեբանի» բառը:

Հոդված ~~7~~9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՆԱԽԱԳԾԻ (Պ-362-13.11.2019,17.01.2020-ՊԻ-011/1)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	*ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ*
1.	Կառավարություն	Նախագիծ	Նախագծի վերնագրում «փոփոխություն» բառը փոխարինել «փոփոխություններ» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է

2.	Կառավարություն, հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված 93[1] հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «Հոդված 93[1] Օրինական ներկայացուցչին գործով վարույթից հեռացնելը 1.Անչափահաս կամ անգործունակ մասնակցի խնամակալը կամ հոգաբարձուն չի կարող մասնակցել վարույթին, եթե՝ 1) գտնվում է ազգակցական կապի կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ այն դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի հետ, ով մասնակցել կամ օրինական ներկայացուցչի ներգրավման պահին մասնակցում է վարույթին. 2) գտնվում է ազգակցական կապի կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ կասկածյալի կամ մեղադրյալի կամ նրանց մերձավոր ազգականների հետ. 3) օրենքով կամ դատական ակտով չի կարող լինել օրինական ներկայացուցիչ. 4) իր վարքագծով ակնհայտորեն վնասում է ներկայացվողի շահերին, իր վարքագծով խոչընդոտել է ներկայացվողի իրավունքների իրականացմանը կամ հանգեցրել է դրանց խախտմանը.	Ընդունվել է	Ընդունվել է

			5) նրա վերաբերյալ առկա են ներկայացվողի շահերի դեմ ուղղված ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր: 2. Անչափահաս կամ անգործունակ մասնակցի ծնողը, որդեգրողը չի կարող մասնակցել վարույթին սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում :»		
3.	Կառավարություն հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված 93^1 հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «2. Անչափահաս կամ անգործունակ մասնակցի ծնողը, որդեգրողը չի կարող մասնակցել վարույթին սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում»:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Հեղինակ	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը լրացնել նոր 1-ին մասով հետևյալ խմբագրությամբ. «1)1-ին մասում «երկու» բառը փոխարինել «մեկուկես» բառով.», համապատասխանաբար փոխել հոդվածի մասերի համարակալումը:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Կառավարություն, հեղինակ	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «2) 2-րդ մասում	Ընդունվել է	Ընդունվել է

			«վեց» բառը փոխարինել «չորս» բառով.»:		
6.	Կառավարություն	Նախագծի 3-րդ Հոդված	Նախագծի 3-րդ հոդված 3-րդ կետի 9-րդ մասից հանել՝ «հարմարավետությունից ու նրա տարիքին և զարգացվածությանը համապատասխանող պայմանների առկայությունից» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	Կառավարություն	Նախագծի 4-րդ Հոդված	Նախագծի 4-րդ հոդվածում «օրենքի» բառը փոխարինել «օրենսգրքի» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	Կառավարություն	Նախագծի 5-րդ Հոդված	Նախագծի 5-րդ հոդվածում «8-րդ» բառը փոխարինել «5.1.-րդ» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
9.	Կառավարություն հեղինակ	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված 341-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Հոդված 341. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը Անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը դատարանում կարող է հարցաքննվել, եթե նրա հարցաքննությունը չի տեսաձայնագրառվել նախնական քննության ընթացքում: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության տեսաձայնագրառումը վերարտադրվում է դատական նիստերի դահլիճում: Եթե տեսաձայնագրառման վերարտադրումից հետո	Ընդունվել է	Ընդունվել է

			առաջանում է անչափահասին հարցեր տալու անհրաժեշտություն, ապա անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը ցուցմունք տալու նպատակով հրավիրվում է դատարան: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման համար, ինչպես նաև սույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ, կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ: Դատական նիստերի դահլիճ վերադառնալուց հետո ամբաստանյալի համար հրապարակվում են անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի ցուցմունքները, և նրան հնարավորություն է ընձեռնվում տվյալ վկային կամ տուժողին տալ հարցեր կամ տվյալ վկայի կամ տուժողի հաղորդած տվյալների վերաբերյալ տալ ցուցմունք: 3. Դատարանում մինչև 16 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կողմի միջնորդությամբ կամ դատարանի		

			նախաձեռնությամբ կատարվում է որակավորված հոգեբանի, իսկ նրա ներգրավման անհնարինության դեպքում մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը: 4. Տասնվեց տարին չլրացած վկան կամ տուժողը հեռացվում է դատական նիստի դահլիճից նրա հարցաքննությունն ավարտվելուց հետո, բացի այն դեպքերից, երբ դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, անհրաժեշտ է համարում այդ վկայի կամ տուժողի հետագա ներկայությունը: 5. Դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, իրավունք ունի անչափահաս տուժողին թույլ տալ ժամանակավորապես դուրս գալ դատական նիստերի դահլիճից, եթե ապացույցների հետազոտմանը ներկա գտնվելը նրա վրա կունենա բացասական ազդեցություն: Դատական նիստերի դահլիճ վերադառնալուց հետո անչափահաս տուժողի համար հակիրճ հրապարակվում են ապացույցների հետազոտման արդյունքները:»:		

10. 10.	Հեղինակ	Նախագիծ	Նախագիծը լրացնել նոր 7-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 7.Օրենսգրքի 166-րդ հոդվածի վերնագրում. «փորձագետի» բառից հետո լրացնել «հոգեբանի» բառը: 1-ին մասում «փորձագետը» բառից հետո լրացնել «հոգեբանը» բառը. 2-րդ մասում «փորձագետի» բառից հետո լրացնել «հոգեբանի» բառը:»:	Ընդունվել է	Ընդունվել է
11.	Հեղինակ	Նախագիծ	Նախագիծը լրացնել նոր 8-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 8. Օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «մասնագետի» բառից հետո լրացնել «հոգեբանի» բառը:»: Համապատասխանաբար փոխել հոդվածների համարակալումը:	Ընդունվել է	Ընդունվել է
12.	Կառավարություն հեղինակ	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի մեկից:»:	Ընդունվել է	Ընդունվել է